



**USAID**  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

«Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների  
օգտագործում և համագործակցություն  
հանուն ռեսուրսների համալիր  
պահպանության» (ԳUSO) ծրագիր

ՀՀ, ք. Երևան, 0009, Տերյան փ. 105/1, «Ցիտադել» բիզնես կենտրոն, 204 սենյակ  
Հեռ: +374 10 514 315, ֆաքս: +374 10 514 317, էլ. փոստ: [aspired@engl.com](mailto:aspired@engl.com)

**Նախամրցութային հանդիպում  
Պարզաբանումներ**

**IFB # 131118-02 Շինարարություն և նյութերի մատակարարում Եղեգնուտ գյուղի ջրամատակարարման  
համակարգի բարելավման ծրագրի շրջանակներում**

Ամիս, ամսաթիվ՝ 20 նոյեմբեր, 2018թ.

Վայր՝ ԱՄՆ ՄԶԳ ԳUSO ծրագրի գրասենյակ (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 105/1, «Ցիտադել» բիզնես կենտրոն, 204 սենյակ)

N	Հարց	Պատասխան
1	Ինչպես ձեռք բերել DUNS համար՝ հայտում ներկայացնելու համար:	Հայտատուի կողմից կտրամադրվի որևէ կոնտակտային տվյալ ԳUSO ծրագրի գրասենյակի կողմից էլեկտրոնային հասցե ուղարկելու համար, որտեղ անհրաժեշտ տվյալների գրանցմամբ հնարավոր կլինի ձեռք բերել DUNS համարը:
2	Կա որևէ ձևաչափ լրացուցիչ հայտի 4-րդ կետի պահանջներով սահմանվող լրացուցիչ տեղեկությունների տրամադրման համար:	Չկա հատուկ ձևաչափ նշված ինֆորմացիայի տրամադրման համար: Անհրաժեշտ լրացուցիչ տեղեկությունները կարող են կցվել ներկայացվող հայտին ցանկացած ձևաչափով:
3	Ծավալաթերթի Տնային միացումներ բաժնում (տողեր 2.25-2.56) բացակայում է ջրաչափական հորը, որը սակայն առկա է գծագրերում (թերթ՝ ԱՁ-23): Տվյալ ջրաչափական հորը արդյո՞ք պետք է տրամադրի և տեղադրի կապալառուն, թե՛ ոչ:	Ջրաչափական հորերը տեղադրվելու են գյուղապետարանի կողմից:
4	Ծավալաթերթի Բաշխիչ ցանց ենթաբաժնում (տողեր՝ 2.1-2.51)	Հողային աշխատանքներն իրականացվելու են

	<p>նշված չեն հողային աշխատանքների ծավալները, գրունտի տեսակները: Արդյո՞ք անհրաժեշտ է ներառել վերոնիշյալ ծավալները տողերի գների մեջ:</p>	<p>գյուղապետարանի կողմից:</p>
5	<p>Գծագրերում (ԱՁ-20) նշված են հատվածներ , որտեղ հողային աշխատանքներ իրականացնելիս պետք է իրականացվեն նաև ասֆալտի քանդման աշխատանքներ, սակայն նախահաշվում առկա չեն ասֆալտի քանդման և վերականգման աշխատանքների ծավալներ: Արդյո՞ք կապալառուն է իրականացնելու ասֆալտի վերականգման աշխատանքները: Արդյո՞ք անհրաժեշտ է ներառել վերոնիշյալ ծավալները տողերի գների մեջ:</p>	<p>Ասֆալտապատման աշխատանքներն իրականացվելու են գյուղապետարանի կողմից:</p>